րէն շատ առաջ բնակութիւն հաստատել են Տաւ-
րիոյ մէջ։

Ինչպէս տեսանք՝ ԺԴ դարու ունեցել են թե-
մական եպիսկոպոսներ. և եթէ ԺԴ դարուն սկիզբ-
ները նոցա եկեղեցին խարխլել է, անշուշտ այդ
եկեղեցին պէտք է լինի մի քանի հարիւր տարուան
չէնք. զի հայկական քարուկիր շինուածք մի քանի
տասնեակ տարիներու միջոց չեն խարխլիր. վկայ
են զրուցածիս այժմ Ղրիմու սարերուն վերայ,
հարիւր տարիէն աւելի անտէրունչ մնացած, դեռ
ևս կանգուն Հայ եկեղեցիք։

Հայոց ի վաղուց գոյութեան ի Տաւրիա մի փաստ
կարող է համարուիլ, Կաֆայէ ոչ շատ հեռի
Սուրբաթ քաղաքին մերձաւոր անտառին մէջ դեռ
ևս կանգուն Ս. Խաչ վանքը (ի հնումն Ս. Նշան,
դեռ ևս առաջ Գամշակ կամ Գէմշակ անապատ).
թէպէտ և այդ վանքը իւր գեղեցիկ եկեղեցեաւ
ԺԴ դարու սկիզբները շինուած է (1330), այլ ա-
ւանդութիւնը մեզ կ'ապահովցնէ, որ այդ թուա-
կանէն շատ առաջ մի այլ վաղեմի հայկական վանք
եղած է նոյն անտառին խորերը, որոյ հիմունքը
ցարդ կեցել են։

Ըստ իմ կարծեաց, Կաֆա քաղաքին միջավայր,
դեռ կանգուն Ս. Սարգիս եկեղեցին, մեծ և զո-
րաւոր ապացոյց է Հայոց վաղեմի գոյութեան ի
քաղաքիս. դա է այն աթոռական եկեղեցին՝ որոյ
շուքին ներքև շատ բարեպաշտիկ աբեղայներ և դպիր-
ներ օրինակել են զանազան հոգևոր գրեանք յին-
թացս հարիւրաւոր տարեաց։ Այդ եկեղեցւոյն ետևի
կողմէն, ընդ մէջ որմին ագուցիկ խաչքարինք, յայտնի
վկայ են եկեղեցւոյն շատ հին լինելուն, քանզի
մինչդեռ բազմաթիւ խաչքարինք ԺԴ դարէ ի խո-